պաշտօնին. օրինակ եկեղեցականը՝ եկեղեցոյ պրոպագանդին, եկեղեցոյ օգտի համար. ուսուցիչը ծառայէր ուսման, ուսումնարանին՝ աշակերտների օգտի համար, աշակերտը սովորէր արհեստներ, գիտութիւններ՝ հասարակութեան օգտի համար: Այսպէս մենք ամենքս մեզ համար ենք ապրում. ոչ ոք հասարակութեան օգտի համար, ոչ ոք հայրենիքի համար: Մենք օգուտ չենք տալիս ոչ ոքին, օգուտ չենք ստանում ոչ ոքից: Մենք այդպէս ենք վնասվել միշտ ամեն ժամանակ:

Ահա մեր ազգի թոյլ կողմը, որ քայքայել է մեզ քաղաքական մարմնի կազմակերպութիւնից, որ քայքայում է հասարակական մարմնի անդամակցութիւնից:

Ո՞վ է տեսել մի հարկի տակ բնակվող մի գերդաստանի անդամներին, որոնք միատեսակ շահեր և միատեսակ թշնամիներ ունին, բայց նոցանից ամեն մէկը իւր համար քանդում է հասարակական պատսպարանի հիմքը: «Ի՞նչ անմտութիւն», ասում ենք մենք մեզի, երբ այդպիսի օրինակներ կարդում, կամ լսում ենք: Միթէ կարելի է, որ մարդը այն տան հիմքը քանդէ, որի տակ ինքը պատսպարվում է. միթէ կարելի է, տզրուկի պէս բոլոր արիւնը ծծել այն ողոմելոյն, որին գիւղացի, ռամիկ են անուանում: Իսկապէս նա է միայն, որ, թէև անգիտակցաբար, բայց ամենի համար է ապրում: Բայց մենք այս ամենը, կրկնում եմ, մտա-